ԼՐԱԳՐՈՂԸ ԹԵԺ ԿԵՏԵՐՈՒՄ

Ռուսական շատ ԶԼ միջոցների համար լրագրողների կյանքի ապահովությունը մեծ «գլխացավանք» է դարձել, և, որպեսզի հնարավոր լինի խուսափել նման խնդիրներից, հաճախ լրագրողներին մերժում են պատերազմական գոտի գործուղելուց, կամ էլ պահանջում են գրավոր փաստաթուղթ, որը հավաստում է լրագրողի և ոչ թե խմբագրության պատասխանատվությունն իրեն գործուղելու համար: 1997 թվականին, Չեչնիայում ռուսական լրագրողների հերթական խմբի պատանդ վերցվելուց հետո, Ռուսաստանի խոշորագույն հեռուստաընկերություններից մեկի ղեկավարությունը որոշում ընդունեց այդուհետև լրագրող չգործուղել Չեչնիայի տարածք:[1] Նման դիրքորոշման արդյունքում տեղեկատվական սով սկսվեց՝ Չեչնիայում իրադրության մասին տեղեկատվությունը քաղվում էր ամենատարբեր երկրորդական աղբյուրներից, ինչի արդյունքում ստացվում էր իրադարձությունների խեղաթյուրված պատկեր:

1999թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ բանտերում էին գտնվում 85 լրագրող, որոնց իրենց մասնագիտական պարտքը կատարելու համար հետապնդում էին ամենատարբեր երկրների իշխանությունները: Աշխարհի ավելի քան 70 երկրներում տեղեկատվական ազատությունը պատրանքային վիճակում է: 1998թ. համեմատությամբ՝ 1999թ. զոհված լրագրողների թիվը կրկնապատկվել էր, որի հիմնական պատճառն, իհարկե, բազմաթիվ և բազմաբնույթ զինված բախումներն ու պատերազմներն էին[2]:

Գերմանական «Շտերն» («Stern») ամսագրի երկու հատուկ թղթակիցները՝ Գաբրիել Գրյուներն ու Վոլկեր Կրեմերը, անհասկանալի պայմաններում սպանվեցին այն ժամանակ, երբ ՄԱԿ-ի խաղաղարար ուժերը մտան Կոսովո:[3] Ծայրահեղականների զոհ դարձան երեք լրագրող Շրի Լանկայում, մեկը՝ Հնդկաստանում և էլի մեկը՝ Թուրքիայում[4]: Նիգերիայում երեք լրագրող զոհվեց էթնիկ խմբավորումների բախման ժամանակ: Նման օրինակները չափազանց շատ են, սակայն 1994թ. «սև տարի» դարձավ «Լրագրողներ առանց սահմանի» կազմակերպության համար. զոհվեց ԶԼՄ 103 աշխատակից: Չեկույցներից հայտնի է դառնում, որ միայն 1998թ. 11 լրագրող է զոհվել՝ կոռուպցիայի

---

[1] ***Панфилов О.*** Боевые действия в Чечне. Уроки и выводы. М., 2004, с.48.

[2] Техника мониторинга конфликтов и нарушений прав журналистов и прессы// Под ред. ***Симонова А.К.***, М., САШКО, 2000, с.84.

[3] Նույն տեղում, էջ 106:

[4] Newsru.com9http://www.ovidco.ru

դեպքերի հետաքննություն իրականացնելու պատճառով:[5] Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ավելացել է նաև իշխանությունների կողմից լրագրողների ձերբակալությունների թիվը: Այն երկրների թվում, ուր առավել շատ է խախտվում խոսքի ազատության իրավունքը, Թուրքիան զբաղեցնում է առաջին տեղը: Այստեղ 1998-2003 թվականների ընթացքում ձերբակալվել է 260 լրագրող, իսկ 60-ի վրա հարձակում է իրականացվել: Թուրքիայում, որը հավակնում է Եվրոխարհրդի անդամ դառնալու, 4 լրագրող ենթարկվել են դաժանագույն կտտանքների,[6] այստեղ վերջին զոհերից մեկն է Հրանտ Դինքը (2007թ.):

1999թ. աշխարհում սպանվել է 34 լրագրող, մեծամասնությունը՝ կանխամտածված: Ռուսական «Պաշտպանության» ֆոնդի տվյալների համաձայն մասնագիտական պարտքը կատարելիս զոհվել է 15 լրագրող, սակայն նվազել են լրագրողների ձերբակալությունների դեպքերը:[7] Լրագրողների ձերբակալությունների առավել բարձր ցուցանիշ ունի Չինաստանը՝ 19 մարդ, երկրորդ հորիզոնականում է մեր հարևան Թուրքիան՝ 18 լրագրող:[8] Յուրաքանչյուր տարի իրենց մասնագիտական պարտքը կատարելիս զոհվում են հարյուրավոր լրագրողներ, ոմանք հակամարտության գոտիներում, իսկ ոմանք էլ չինովնիկների «գործունեությունն» ուսումնասիրելու արդյունքում, ինչը յուրօրինակ թեժ գիծ է դարձել լրագրողական իրականության մեջ: Այս տվյալները հավաստում են արտակարգ իրավիճակներում լրագրողի խոցելիության մասին: Ուստի պատերազմական գոտի մեկնող յուրաքանչյուր լրագրող առաջին հերթին պետք է անցնի ֆիզիկական և հոգեբանական հատուկ պատրաստվածություն և նոր միայն մեկնի ճակատային գիծ: Լրագրողը պատասխանատվություն է կրում ոչ միայն կոնֆլիկտի շրջանից իր հաղորդած տեղեկատվության, այլ նաև սեփական սխալների համար:

Մարդկությանը միշտ էլ հետաքրքրել են կոնֆլիկտների մասին նյութերը, այն ամենն, ինչ կատարվում է պատերազմում: Եվ յուրաքանչյուր հասարակություն իրավունք ունի տեղեկանալու, թե ինչ է կատարվում կոնֆլիկտի գոտում: Եվ երբեք չի կարելի մոռանալ լրագրողի պատասխանատվության մասին, թե ինչպես է նա լուսաբանում այդ իրադարձությունները:

20-րդ դարի ընթացքում միջազգային իրավունքը փորձում էր «վնասազերծել» լրագրողի մասնագիտական գործունեությունը նման իրավիճակներում՝ ձգտելով շտկել դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներից լրագրողի կարգավիճակը զինվորական գերիների կարգավիճակին հավասա-

---

[5] Техника мониторинга конфликтов и нарушений прав журналистов и прессы// Под ред. Симонова А.К., М., САШКО, 2000, с.104.
[6] Նույն տեղում, էջ 104-105.
[7] Նույն տեղում, էջ 29:
[8] Նույն տեղում, էջ 81:

ռեցնելու բացթողումը: Նման իրավիճակում լրագրողների վրա կտարածվեին այն բոլոր իրավունքները, որոնք վերապահված էին զեղինների՝ նրանց գերելու պահից: Դրա համար լրագրողն իր մոտ անպայման պետք է ունենար իր անձն ու մասնագիտությունը հաստատող փաստաթուղթ: 1949 թվականին այս պահանջը փոքր-ինչ մեղմացվեց «պարտադիր չէ, որ լրագրողն ունենա իր անձն ու մասնագիտությունը հաստատող փաստաթուղթ, այլ պարտադիր է, որ աշխատանքը կատարելու համար նա հավատարմագրված լինի այդ զինվորական զորամասերից մեկի կողմից»[9] դրույթով, իսկ հարցաքննության ընթացքում պետք է կարողանա ապացուցել իր առնչությունը ժուռնալիստիկային: 1977 թվականին ՄԱԿ-ն ընդունեց նոր կոնվենցիա, որով լրագրողները հավասարեցվում էին քաղաքացիական բնակչությանը: Այսինքն, այն բոլոր իրավունքներն ու պարտականությունները, որ ունեին քաղաքացիական անձինք պետք է տարածվեին նաև լրագրողների վրա: Սակայն դրանք լրագրողի վրա տարածվում էին այնքան ժամանակ, քանի դեռ նա անմիջականորեն չէր մասնակցում ռազմական գործողություններին: Լրագրողների մի մասը կարծում է, որ թեժ կետում լրագրողն իր ապահովության համար պետք է ունենա նվազագույնը ատրճանակ, իսկ ավելի լավ կլիներ, եթե հավատարմագրման հետ միասին իրենց ավտոմատ տրամադրեին:[10] Սակայն պետք է հիշել՝ այն պահից, երբ լրագրողի ձեռքին զենք է հայտնվում, նա անմիջապես վերածվում է զինվորականի, և քաղաքացիական հասարակության իրավունքները կարգավորող միջազգային հումանիտար իրավունքն արդեն նրա վրա չի տարածվում: Լրագրողը նման իրավիճակներում իր ձեռքը զենք չպետք է վերցնի, քանի որ այն ոչ թե կօգնի, այլ կխանգարի նրա մասնագիտությունն իրականացնելուն:

Իսկ ինչ կանոններ են գործում, և լրագրողն ի՞նչ պետք է նկատի առնի, երբ գտնվում է ռազմական կոնֆլիկտի շրջանում.

1.լրատվության սահմանափակում,

2.պետք է ունենա իշխանությունների թույլտվությունը՝ մարտական կամ պատերազմական գործողությունների իրականացման շրջանում գտնվելու համար:

Այստեղ նման սահմանափակումներն արդարացված են, քանի ցանկալի չէ, որ լրագրողի ձեռքն ընկնի ցանկացած տեղեկություն: Օրինակ լրագրողները կարող են նկարահանել, լուսանկարել, ցուցադրել տեղեկություններ այնպիսի օբյեկտների մասին, որոնց մասին հատկապես չպետք է տեղեկանա հակառակորդ կողմը: Նշված սահմանափակումները հիմնավորված են,

---

[9] Журналисты в "горячих точках": технология професионального поведения, Институт гуманитарных коммуникаций, 2000, с-11.
[10] Նույն տեղում, էջ 12:

որովհետև, ամեն դեպքում մարտական գործողությունների համար պատասխանատվությունն ամբողջովին կրում են զինվորականները: Այսպես, օրինակ. արցախյան պատերազմի սկզբներին, երբ իրականում մեր ազատամարտիկները չափազանց թույլ էին զինված (պատահում էր, որ 5 ազատամարտիկի մեկ որսորդական հրացան էր բաժին ընկնում), իսկ ադրբեջանական կողմը վայնասուն էր բարձրացրել, թե հայ գրոհայինները զինված են ամերիկյան լավագույն զենք ու զինամթերքով, «Երկիր» օրաթերթն իր առաջին էջում տպագրել էր զինված հայ ջոկատներից մի ազատամարտիկի լուսանկար, իսկապես զինված ամերիկյան ավտոմատով: Սա, իհարկե, այնքան էլ լրագրողի մեղքը չէ, որքան վերոհիշյալ թերթի ղեկավարության անգիտությունն ու անհեռատեսությունը՝ նման լուսանկարի թողած հետևանքների մասին:

Յուրաքանչյուր լրագրողի վարքագծի համար պատասխանատվություն է կրում այն օրգանը, որը հավատարմագրել է նրան: Համաձայն Միջազգային հումանիտար իրավունքի նորմերի, այն լրագրողը, որը խախտում է կոնֆլիկտային գոտում աշխատելու և հավատարմագրման սահմանված կարգը, հենց ինքն էլ զինվորականների և իրեն հավատարմագրողներին ազատում է իր անվտանգության պատասխանատվությունից:

Լրագրողները պարզապես պետք է իմանան, որ որևէ պատերազմական գոտի գործուղվելուց առաջ պետք է ըստ հնարավորին, ուսումնասիրել հակամարտող կողմերի ավանդույթները, սովորույթները, նիստուկացն ու մշակույթը: Այսինքն՝ միջավայրը և մարդկանց:

«Թեժ կետ» կարելի է մեկնել այն դեպքում, երբ լրագրողը գոնե դյուզնինչ չափով գիտի ինչպես վարվել, ինչպես շփվել, ինչ յուրահատկություններ ու առանձնահատկություններ կան այդ շրջանում, պատմական այլ «մանրուքներ», որոնք ընդլայնում են լրագրողի և ազգաբնակչության շփման եզրերը:

Այսպիսի գործելակերպի հետ է կապվում լրագրողի անվտանգությունը: Անվտանգություն ասելով՝ սովորաբար հասկացվում է որևէ օբյեկտի այնպիսի վիճակ, որի դեպքում չեն խաթարվում նրա ներքին կամ արտաքին գործառույթները կամ էլ չի պահանջվում լրացուցիչ հատուկ միջոցների կիրառություն: Մյուս բոլոր իրավիճակներում, երբ օբյեկտը դուրս է գալիս այդ սահմաններից, արդեն ստեղծվում է այլ իրավիճակ, որտեղ օբյեկտը գործում է այս կամ այն չափի վտանգի պայմաններում: Եվ բոլոր այն դեպքերում, երբ լրագրողն աշխատում է կոնֆլիկտային գոտում, նա գտնվում է վտանգի մեջ: Հաճախ կարելի է հանդիպել այնպիսի դեպքերի, երբ թեժ կետերում աշխատող լրագրողը գլխացավանք է դառնում ոչ միայն իր, այլ նաև բոլոր նրանց համար, ովքեր կատարում են իրենց պարտականությունները:

Որպես կանոն, լրագրողը լարվածության գոտի է գործուղվում խմբագրության հանձնարարությամբ: Գործուղման ընթացքում, թվում է, պետք է առանձնացնել երեք պարտադիր փուլ՝ նախապատրաստության, բուն աշխատանքի և գործուղումից վերադառնալու փուլերը:

Նախապատրաստական շրջանում լրագրողը մեկնում է մի տարածաշրջան, ուր առկա է զինված կոնֆլիկտ: Առաջինը, ինչից ցանկալի է սկսել, այն է, որ պետք է ճշտել այդ տարածաշրջանի աշխարհագրական դիրքը, քաղաքական կառուցվածքը և կոնֆլիկտի էությունը (եթե լրագրողը չի ներկայացնում բախվող որևէ կողմի): Պետք է փորձել հասկանալ դրա իսկական դրդապատճառները, ոչ թե միայն մեկ կողմի փաստարկներից, այլ օբյեկտիվ՝ դիտարկելով այն ամենատարբեր տեսակետներից: Եվ ոչ միայն նրա համար, որ դրա մասին պետք է գրել, այլ որպեսզի, երբ արդեն լրագրողը գտնվի նրանց մեջ, կարողանա հասկանալ, թե ինչի մասին են խոսում, քանի որ լրագրողի աշխատանքը 90 տոկոսով շփում և տեղեկատվություն ստանալ է նշանակում: Պետք է փորձել ստանալ հնարավորինս շատ տեղեկատվություն կամ գործընկերներից, որոնք արդեն եղել են այդ տարածքներում կամ ՁԼՄ-ից կամ, այլ աղբյուրներից: Իսկ ամենակարևորը՝ պետք է հասկանալ, գիտակցել, թե ում կողմից պետք է հանդես գալ և լուսաբանել իրադարձությունները:

Կարևոր է սովորել և իմանալ, թե ինչպիսիք են այնտեղ կենցաղային պայմանները, կլիման: Եվ կազմակերպել սեփական անվտանգության ամբողջականությունը՝ հագուստ, դեղարկղիկ, սննդի ինչ-որ քանակ:

Կարևորագույն պայմաններից է նաև ապահովագրությունը: Լրագրողի «թեժ կետ» մեկնելուց առաջ ցանկալի է, որ խմբագրությունն ապահովագրի նրան հատկապես երկու բանից՝ առաջինը՝ նրա տեղափոխումը հիվանդության կամ վիրավորվելու դեպքում, երկրորդը՝ ֆինանսավորումը այն դեպքերի համար, եթե լրագրողին գերեվարել են, կամ էլ նա կորել է: Իրավապահ մարմինները հաճախ այն երկընտրանքի առաջ են կանգնում, որ գիտեն՝ անհրաժեշտ է վճարել տեղեկատվության համար, և գիտեն, թե ում, սակայն չկան համապատասխան ֆինանսական միջոցներ կամ լրագրողի փրկության նպատակով կարող է թռչել ինքնաթիռ, սակայն վառելանյութ չկա և պահանջվող չափաքանակն էլ սպառվել է: Սա ընդհանուր սխեման է, որով էլ անհրաժեշտ է առաջնորդվել և պատրաստվել գործուղման մեկնելիս:

Որևէ երկիր մեկնելիս լրագրողը պետք է պարզի, թե ինչ օրենքներ են գործում այնտեղ: Պետք է նաև քաջ գիտակցել, որ պատերազմական գոտում չեն գործում այն օրենքները, որոնց սովոր ենք: Որովհետև այնտեղ, ուր գործում

են զորքերը, գործում են հրամանն ու զինվորական կանոնագրերը: Եթե զինվորականը ստացել է հրաման, նա ամեն գնով պետք է կատարի[11]:

Եթե լրագրողը հայտնվել է զինված կոնֆլիկտի շրջանում, նա հավատարմագրվելու է համապատասխան կառույցում (դա կարող է լինել զինվորական շտաբը կամ լրագրողների հետ աշխատող հատուկ ծառայությունը)՝ ստանալով հավատարմագրման թերթիկ: Այս փաստաթուղթը պարտադիր պետք է միշտ լինի լրագրողի մոտ, քանի որ դրա բացակայության դեպքում շատ դժվար կլինի ապացուցել լրագրող լինելու փաստը: Երբ լրագրողն ունի համապատասխան կառույցի կողմից ստորագրված և կնքված հավատագրման թերթիկ, միայն այս դեպքում է նրա վրա տարածվում Ժնևյան պաշտպանության համակարգը: Թեկուզ և պայմանական, բայց տարածվում է:

---

[11] Պատերազմի և զինված ընդհարումների օրենքները միացնում են իրավունքի երկու կարևոր բաժիններ: Ժնևյան իրավունքը կարգավորում է մարդկանց իրավիճակը պատերազմի ժամանակ, իսկ Հաագայի իրավունքը պաշտպանության կամ հարձակման այս կամ այն միջոցը կիրառելու իրավունքն է: Ժնևյան կոնվենցիաները չորսն են, որոնցից վերջինն ընդունվել է 1949թ.: Դրանցից առաջինը՝ ցամաքային կոնֆլիկտների ժամանակ վիրավորների և հիվանդների վիճակին է առնչվում, երկրորդը՝ նույնը, սակայն ծովային կոնֆլիկտների ժամանակ, երրորդը՝ զինվորական գերիներին է առնչվում, իսկ չորրորդը՝ խաղաղ բնակչության պաշտպանությանը: Կա երկու լրացուցիչ արձանագրություն, որոնք ընդունվել են 1977 թվականին: Սրանցից առաջինը լրացնում է այդ կոնվենցիաների կիրառությունը միջազգային կոնֆլիկտների, իսկ երկրորդը՝ ներքին կոնֆլիկտների ժամանակ: Այս կոնվենցիաներում մեզ հետաքրքրում են նշված «թեժ կետերում» գործող լրագրողների իրավունքները: